

ԼԻՔԱՆԱՆ ԵՐԲԵՔ ԿՏԱՆԳԱԿՈՐ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՉԻ ԳՏՆՈՒԻՐ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՐ ԱՐՈՒՏ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երեկ շեշտեց, որ Իրաքի դեմ ամերիկեյրիտանական պատերազմին հանդէպ Լիբանանի կեցուածքը կը մնայ նոյնը՝ յարգել միջազգային օրէնքներն ու օրինականութիւնը:

Նախագահ Լահուտը սա, որ Լիբանան երբեք վտանգաւոր կացութեան մէջ չի գտնուիր, որովհետեւ կայուն երկիր է, պոռթկ հուսաբական քանդումի վէճերէ եւ հեռու՝ ծայրայեղութիւններէ եւ արմատականներէ:

Նախագահը աւելցուց, որ երկրին ու քաղաքացիներուն ապահովութեան կայունութեան սպառնացող արարքներն ու գործողութիւններն Տընիսիի դէպքերէն սկսեալ եւ հասնելով մինչեւ շարք մը ճաշարաններու պայթումներուն, հետապնդուեցան եւ տակաւին կը հետապնդուին լիբանանեան կառավարութեան կողմէ: «Լիբանանի վրայ որեւէ յարձակում, որ ի նպաստ Իսրայէլի է, կը սպառնայ շրջանի կայունութեան», նշեց ալ:

Նախագահ Լահուտը զիտել տուաւ, որ ՄԱԿը լուսանցքային դարձնելու եւ անոր դերակատարութիւնը

անտեսելու աշխատանքներն ու փորձերը մէկ կը վերադարձնեն Միջին դարերուն եւ անտառի օրէնքին, շեշտելով սակայն, թէ Միացեալ Նահանգներ պէտք է դիւրացրեն ՄԱԿի «վերադարձ»ը, այլապէս՝ Մ. Նահանգներու հանդէպ աշխարհին կենսածրոյցը պիտի ըլլայ ծիտական:

Անդրադառնալով իրաքեան պատերազմի պարագայներուն լոյսին տակ Արաբական Լիգայի ապագային, նախագահ Լահուտ յոյս յայտնեց, որ արաբական երկիրներն ու ղեկավարութիւնները Իրաքը նկատի կ'ունենան իբրեւ «բարի» օրինակ:

Լիբանանեան ներքին հարցերու մասին նախագահ Լահուտը ընդգծեց, որ իր նախագահութեան ընթացքին տրուած երդումը կը կապեն հիմները կարող եւ ամուր պետութիւն մը կանգնելու աշխատանքին: Հետեւաբար ան շեշտեց, թէ երկրին գերազանց շահերը աւելի վեր են ու կարելորէ քան անձնական շահերը:

Նախագահ Լահուտը հաւաստեց, որ ընտրութեանց նոր օրէնքը, որ պիտի մշակուի ու որդեգրուի՝ կը նկատուի երկ-

րին եւ լիբանանցիներուն միասնականութիւնը կ'երտող ամէնէն կարելոր օրէնքը պիտի սկսի նաեւ Լիբանանի ազգային քաղաքական կեանքը:

Նախագահ Լահուտը շեշտեց նաեւ, որ հարկ է ամրապնդել Լիբանանի երիտասարդութեան ազգային պատկանելիութեան ոգին, նկատել տալով, որ նոր սերունդը տակաւին բազմաթիւ պարտականութիւններ եւ պատասխանատուութիւններ ունի կատարելիք:

Նախագահ Լահուտը վերահաստատեց, որ Լիբանանի ուժը կը կայանայ իր ժողովուրդին միասնականութեան մէջ:

Նախագահ Լահուտը այս յայտարարութիւնները կատարեց Պապատայի մէջ, Լիբանանեան համալրարանի իրաւաբանութեան, քաղաքական գիտութեանց եւ միջազգային յարաբերութիւններու բաժանմունքներու ուսանողները ընդունելու ընթացքին:

ՎԱՌԵԱՆԻԹԵՐԻ ՍԱԿԻ ՆՈՒԱԶՈՒՄ

Յաջորդական հինգերորդ շաբաթն ըլլալով վառելանիւթի սակերը կ'արձանագրեն նուազում, հետեւելով ուժանիւթի եւ ջուրի

հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտունի որոշումներուն. թիթեղ մը պենչիկը արձանագրած է 300 լ. ոսկիի նուազում, մապուր՝ 200 լ. ոսկիի, իսկ ֆիուլ օլլը՝ 3 տոյարի:

Վառելանիւթերու նոր սակացոյցը հետեւեալն է.

Առանց կապարի 98 օքթան թիթեղ մը պենչիկը՝ 21,300 լ. ոսկի, առանց կապարի 95 օքթան պենչիկը՝ 20,500 լ. ոսկի, առանց կապարի 92 օքթան պենչիկը՝ 20,200 լ. ոսկի, առանց կապարի 90 օքթան պենչիկը՝ 20,100 լ. ոսկի, քարիզի թիթեղը՝ 9000 լ. ոսկի, իսկ ֆիուլ օլլը՝ 231 տոյար:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՌՈՒՆ ՅԱՅՏԱԳՐՈՒՄԵՐԸ

- Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորհրդարանը ընթերցում
- Ժամը 10:00 Ամբիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Սրբ. պատարագի ուղղակի ձայնասփռում
- Ժամը 12:00 Զաղաքական լուրեր/հայերէն
- Ժամը 1:00 Ազգային-յեղափոխական երգեր
- Ժամը 2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
- Ժամը 3:00 «Ալաուտին ձայնը»
- Ժամը 4:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
- Ժամը 6:30 Զաղաքական լուրեր/հայերէն

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երեկ յայտարարեց, որ ՄԱԿ Լիբանանը տեղեակ պահած է, թէ Թրիփոլիի նախահանգիստը դրուած է դէպի Իրաք մարդասիրական օժանդակութիւն հասցնելու նախահանգիստներու ցանկին վրայ:

Միքաթի զիտել տուաւ, որ նշեալ որոշումը տրուեցաւ Հոմի մէջ, նախագահութեամբ «քաղաքականութեան նախագահ Քարլոս Էտտէն, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցերը:

Միքաթի ընդգծեց, որ յաջորդ քայլը պիտի ըլլայ նաեւ Պէյրութի նախահանգիստի պարագան:

● ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երեկ Քորայթի մէջ ընդունեց Ազգային խմբաւորում Կուսակցութեան նախագահ Քարլոս Էտտէն, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցերը:

● ՓՈՒՍ Վարչապետ Իսամ Ֆարէս երեկ ընդունեց գաղթականութեան հարցերու նախարար Մարուան Համատէն եւ տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտին, որոնց հետ քննարկեց երկրին կայունութեան անհրաժեշտութիւնը եւ ազգային միասնականութեան առաջնահերթութիւնը:



● ՈՒԺԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երեկ իր գրասենեակին մէջ ընդունեց Պարէտ Ելէկտրականութեան ընկերութեան պաշտօնէականներու մէկ յանձնախումբը, որոնց հետ քննարկեց ընկերութեան եւ պաշտօնէական կացութիւնը:

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ փոխ նախագահ Էլի Ֆրայի երեկ շեշտեց, որ Լիբանան - Սուրիա սերտ յարաբերութիւնները պիտի ապահովեն երկու երկիրներուն ռազմավարական ապահովութիւնը. աւելցնելով, որ ծիտական որեւէ արարք, որ կը սպառնայ Սուրիոյ մէջ, կ'ազդէ Լիբանանի եւ փոխադարձաբար:

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Պուրոս Աֆէյր պատրիարքը երեկ ընդունեց պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցերը: Ենթադրեցան լիբանանեան սուրիական գործակցութեան ամրապնդման եւ ՄԱԿի առաքելութեան արժեւորման անհրաժեշտութիւնը: Պերքէ այցելուներէն եղան նաեւ երեսփոխաններ Նասրալլա Ապի Նասրը եւ Միխայէլ Տահէր:

● ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ Առեւտրականներու Միութեան նախագահ Փոլ Այանեան որոշատեց ներկայ շրջանային պայմաններու ընթացքին իշխանութեան երեք պետերուն որդեգրած կեցածքները: Այանեան շնորհաւորեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրը, ինչպէս նաեւ ներքին ապահովութեան ուժերը, որոնք կը պահպանեն երկրին ապահովութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները եւ Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը տեղեկացնում են, որ 18 տարին լրացած բոլոր այն ՀՀ քաղաքացիները, որոնք բնակւում կան ժամանակաւորապէս գտնուում են Լիբանանում, Սիրիայում, ինչպէս նաեւ Յորդանանում, կարող են Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի համաձայնական ընտրակարգով ընտրութիւններին մասնակցել Պէյրութում եւ Դամասկոսում տեղակայուած Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններում եւ Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնում գործող ընտրական տեղամասերում:

Դեսպանութիւններում եւ գլխաւոր հիւպատոսութիւններում հաշուառման կանգնած ՀՀ քաղաքացիները ներառուած են ՀՀ ԱԺ ընտրութիւններին ընտրացուցակներում, որոնց կարելի է ծանօթանալ վերոյիշեալ ներկայացուցչութիւններում: Այն ՀՀ քաղաքացիները, որոնց անունները բացակայում են այդ ցուցակներում, համապատասխան յայտ ներկայացնելուց յետոյ լրացուցիչ կ'ընդգրկուեն դրանցում:

Քուէարկելու համար ընտրողները ՀՀ ԱԺ ընտրութիւնների օրը՝ Կիրակի, Մայիս 25ին, առաւօտեան ժամը 8:00ից մինչեւ երեկոյեան 20:00ի ընթացքում պէտք է ՀՀ քաղաքացիական անձնագրերով ներկայանան ՀՀ դեսպանութիւններ եւ գլխաւոր հիւպատոսութիւն հետեւեալ հասցէներով՝ Պէյրութ, Մթալիէ, 28 Ռի Տը Ժամսէն Դամասկոս, Ատնան Մալքիէ, Պիտտար Իպրահիմ Հանասո

Հալէպ, Էլ Քաուաթիաի 4, Թահա Հիւսէյն 12:

Լրացուցիչ տեղեկութիւններ համար պանգահարել՝ 04-418860 (Պէյրութ) 011-373-2992 (Դամասկոս) 021-268-7240 (Հալէպ)

ՀԱՄՄՈՒՏ ԻՐԱՔԻ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿԵՑ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երեկ շեշտեց, որ նախարարութիւնը դիւանագիտական խմբաւորումներու ծրագիր մը մշակած է, սակայն պայն չէ ներկայացուցած կառավարութեան, որովհետեւ անոնց շուրջ խորհրդակցութիւնները տակաւին չեն աւարտած: Համմուտ աւելցուց, որ նշեալ յայտարարութեան ղուրս կատարուած յայտարարութիւնները ճշգրիտ չեն:

Համմուտ երեկ ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինչընը, որմէ տեղեկացաւ Պէլֆասթի մէջ գումարուած ամերիկեյրիտանական վեհաժողովին արդիւնքներուն մասին, ինչպէս նաեւ ստացաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Գուշի եւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէրի կատարած ամբողջական յայտարարութիւններու բնագիրները, որոնք կը վերագրուին իրաքեան եւ պաղեստինեան տագնապներուն:

Միւս կողմէ, նախարարութեան քաղաքական հարցերու տնօրէն Նաժի Ապի Ապի երեկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորի Պոլոթինը, որուն հետ քննարկեց Իրաքի դեմ պատերազմին արդիւնքները:

Հանդիպումին շեշտուեցան Իրաքի մէջ լեւապատերազմեան շրջանին ՄԱԿի կարելոր դերակատարութեան անհրաժեշտութիւնը:

ԾԱՂԿԱԶԱՐԴԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, Ծաղկազարդի տօնին առիթով, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, քարոզէ եւ քափօրին ճախագահէ՝

Թեմիս բարեջան առաջնորդ՝ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Սկիզբ ժամերգութեան	Ժամը 7:30ին
Սկիզբ պատարագի	Ժամը 9:30ին
Թափօր	Ժամը 11:00ին

Նոյն օրը, կեսօրէ ետք ժամը 4:00ին, տեղի պիտի ունենայ ԴՈՆԱՍԵՔԻ արարողութիւն, զոր պիտի կատարէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝ Թեմիս բարեջան առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Սիրով կը իրակիրուի հաւատացեալ ժողովուրդը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

Սկսած են 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կրթական յաջորդ տարեշրջանին համար նորեկ աշակերտներու արձանագրութիւնները սկսած են Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանին մէջ: Արձանագրութեան օրերը՝ Երկուշաբթին Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ ժամը 1:00, վարժարանի քարտուղարութեան մօտ: Կայք. Պորժ Համուտ, Արաքս փողոց: Եե. 01-260504:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համաձայն 2002 թ. Մայիսին Երեւանում կայացած Հայաստան - Սփիւռք երկրորդ խորհրդածողովի որոշումների եւ առաջարկութիւնների՝ Հայաստանի արտաքին գործերի եւ կրթութեան ու գիտութեան նախարարութիւնների, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի եւ Երեւանի Պետական համալսարանի նախաձեռնութեամբ, 2003 թ. Սեպտեմբերի 15-20ը Երեւանում հրաւիրուում է Հայագիտական Միջազգային Առաջին Քոնկրէսը:

Քոնկրէսին մասնակցութեան հրաւերներ են ուղղուել բազմաթիւ հայ եւ օտար գիտնականներին: Եթէ կան հայագէտներ, որոնց չի ուղղուել հրաւեր, սակայն նրանք ցանկանում են մասնակցել, կարող են դիմել Քոնկրէսի Կապակոմիտէին:

Քոնկրէսի մասնակցութեան, ինչպէս նաեւ լրացուցիչ տեղեկութիւնների համար խնդրում ենք դիմել Քոնկրէսի նախապատրաստող աշխատանքային խմբի ղեկավար Արամ Սիմոնեանին հետեւեալ հասցէով՝

375025 Երեւան, Ալեք Մանուկեան 1 Երեւանի Պետական Համալսարան Միջազգային Կապերի Բաժին Ֆաքս՝ +374-1/554641, էլ. փ. pr-int@ysu.am

ԼԻՔԱՆԱՆՈՒՄ Հ. Հ. ԳԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՐԿ. ԸԱՐԹՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Էշրեֆիի Ս. Յակոբ Եկեղեցւոյ քահանայ Տ. Մեսրոպ Ս. Բերքեղան Աւագ Շաբթուան ընթացքին ամեն օր առաւօտեան ժամը 7:30ին պիտի կատարէ շաբթուան իւրաքանչիւր օրուան մասին խորհրդածութիւններ, Երկուշաբթի, 14 Ապրիլ 2003էն սկսեալ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»

Այսօր՝ «Վանայ Չայն»-էն ունկնդրեցէք Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի Մարմինի պատրաստած

«ՀԱՅ ԴԱՏԱ ԱՅՍՕՐ»

յայտագիրը
- Շաբթուան մտածումը
- Լուրեր՝ Հայ Դատի մասին
- Պատմական ակնարկ՝ անցեալէն այսօր

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՍՈՒՐԸ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՍՄԱՌՈՐ ԹԱՓՈՐ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Կիրակի, 13 Ապրիլ, Ծաղկազարդի տօնին առիթով, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ՝

ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԵՂԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	Ժամը 8:00
Սկիզբ Ս. պատարագի	Ժամը 10:00
Թափօր	Ժամը 10:30

Ծաղկազարդի տօնին առիթով հայ մանուկներուն ու պատանիներուն իր հայրական խօսքը պիտի ուղղէ եւ պապ վեհարանին մէջ զիրենք պիտի ընդունի՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԴՌՆԵԱՅԷՔԻ ԱՐԱՐՈՂ ՈՒԹԻՒՆ

Նոյն օրը կեսօրէ ետք ժամը 4:00ին, տեղի պիտի ունենայ Երեկոյեան ժամերգութիւն եւ Դոնթագեթի արարողութիւն, զոր պիտի կատարէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԶԱՐԵԿ ԱՐԸ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ

Սիրով կը իրակիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու առաւօտեան Ս. պատարագին եւ յետմիջօրեի արարողութեան, լեցուելու համար Քրիստոսի գալստեան խորհուրդով:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի թեմի Ալգալիյն Գալուսական ժողովի 2003 տարուան նիստերը տեղի ունեցան Ուրբաթ 4 և Շաբաթ 5 Ապրիլ 2003ին, նախագահութեամբ՝ թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ եպ. Խաչերեանի: Ժողովի ընթացքին քննարկուեցան Կրօնական և Քաղաքական ժողովներու տեղեկագիրները, Ալգալիյն առաջնորդարանի իրականացած և նախահաշի պիտոմները, ինչպէս նաեւ ընդհանուր հաշուական կազմութիւնը, Ալգալիյն վարժարաններու իրավիճակը և այլ օրակարգի հարցեր: Ժողովի աւարտին ընտրուեցան Կրօնական և Քաղաքական նոր ժողովներ:

Կրօնական ժողովի անդամ ընտրուեցան. Տ. Աշոտ Ա. քինյ. Գարագաշեան, Տ. Արսէն քինյ. Բեշիշեան, Տ. Խաչիկ քինյ. Միսիրեան, Տ. Գուրգէն քինյ. Յովհաննէսեան, Տ. Յարութիւն քինյ. Կոստանեան, Տ. Ներսէս քինյ. Ճերմակեան և Տ. Վաչէ քինյ. Թաթոյեան:

Քաղաքական ժողովի անդամ ընտրուեցան. Պրնք. Վրէժ Սապունճեան, Չաւէն Պոյաճեան, Ժոյէֆ Աշեան, Ժիրայր Պարսումեան, Յակոբ Գլխաշեան, Չոհրապ Թորիկեան, Լեւոն Տէր Սարգիսեան, Յակոբ Աբրահամեան, Բաֆֆի Սիսլեան, Հրայր Անլեան և դոկտ. Հիլտա Պայրամեան:

Կրօնական և Քաղաքական ժողովները իրենց անդամակից նիստերը գումարեցին և դիւանները ընտրեցին հետեւեալ ձեւով.

Կրօնական ժողով
Տ. Աշոտ Ա. քինյ. Գարագաշեան - ատենապետ

Տ. Գուրգէն քինյ. Յովհաննէսեան - ատենադպիր

Քաղաքական ժողով

Պրն. Ժիրայր Պարսումեան - ատենապետ

Պրն. Յակոբ Աբրահամեան - ատենադպիր

ԴԻԻԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՃԱՂԿԱԶՍԱՐԴԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 13 Ապրիլ 2003ի առաւօտեան ժամը 10ին:

Պիտի պատարագ և յաւուր պատշաճի պիտի քարոզէ:

ԱՍԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՏԵՐ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԵ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԸՆՅՈՑ

Յաւարտ Ս. պատարագի, պիտի կատարուի ուստորինքն և աւանդական թափօր Սեբրոպեան վարժարանի բակին մէջ:

Յետմիջօրի ժամը 5:00ին,
ԱՍԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ
ՇՈՒՆՈՐ ՏԵՐԸ

Պիտի նախագահէ երեկոյեան ժամերգութեան, ապա պիտի կատարէ ԴՆԱՐԱՅԵԻ արարողութիւնը:

Հաւատացեալ ժողովուրդը սիրով հրաւիրուած է մասնակցելու վերոյիշեալ սուրբ արարողութիւններուն:

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«Վանայ Չայն»-ը ուղղակի ձայնասփռուող շաբաթական յայտագիրը՝

ՏԵՍԱԿԵՏ

Երեքշաբթի, 15 Ապրիլ 2003,
կէսօրէ ետք ժամը 5:00ին,

Գրիթը՝

ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կը խօսին՝

ՏՈՔԹ. ԽԱՉԻԿ ՓԱՆՈՍԵԱՆ
ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ ՏԱՊՊԱՂԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք «Վանայ Չայն»՝ 01-267657 եւ 01-241199 թիւերուն և տուրք ձեր կարծիքը:

ՏՈՔԹ. ՅԱԿՈՒ ՄԵԼԷՔԵԱՆ (ՍԱՆԱԳԵՏ՝ ՆԵՐԵՆ ԸՆԴԱՆՈՒԹԵԱՆՑ)

Յարգոյ հիւանդները կ'ընդունի իր նոր դարմանատան մէջ:

Պուրճ Համուտ, «ԱՖԵՏ»-ի շէնք, Յրդ յարկ, հեռ. 01-251365 եւ 03-341362:

ԼՈՒՐԵՐ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ. ԱՆԹԻԼԻԱՍ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԺՐԱԳԻՐՆԵՐ Կ'ԻՐԱԳՈՐԾՈՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՍԱՅՐԱՎԱՆՔԵՆ ՆԵՐՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Տեղեկատուական գրասենեակը ուրախութեամբ կը հաղորդէ, որ 2003 Յունուար ամիսէն սկսեալ մեծ թափ ստացած են կաթողիկոսարանէն ներս նոր գրասենեակներու, արխիւատան, նոր գրատան ու հիւրանոցային յարկաբաժիններու կառուցման աշխատանքները:

Վերջին տարիներուն կաթողիկոսութեան ներքին թէ արտաքին յարաբերական աշխատանքներուն զգալի ծաւալումն ու ընդարձակումը, ստիպողական անհրաժեշտութիւն դարձուցին նոր կառուցներու յաւելումը կաթողիկոսարանէն ներս:

Սոյն ծրագիրին իրականացման առաւել զարկ տուին միաբանական երկու շէնքերու՝ եպիսկոպոսարանի ու վարդապետանոցի կառուցման աշխատանքները, որ իրենց նոր յարկաբաժինները ունեցան միաբան հայրեր: Այնուհետեւ անոնց բնակութեան նախկին շէնքերը՝ հին եպիսկոպոսարանն ու միաբանական թաղը որոշուեցան վերածել նոր գրասենեակներու, նոր գրատան և հիւրանոցային յարկաբաժիններու: Իսկ սոյն յարկերուն մէջ գտնուող արխիւատան յատկացուած սենեակները որոշուեցան աւելի ընդարձակել ու վերածել մէկ ամբողջական բաժանմունքի, որ պիտի ունենայ նաեւ ուսումնասիրութեան յատուկ աշխատանոց:

Նոր կառուցուող գրասենեակներու յարկին մէջ պիտի կեդրոնանան Քրիստոնէական Դաստիարակութեան, Տեղեկատուական ու յարաբերութեան, միջեկեղեցական բաժանմունքները, «Հասկ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը, իրենց առանձին արխիւատուններով ու յարակից մասերով: Սոյն յարկին վրայ կը կառուցուի նաեւ կաթողիկոսարանի ժողովարանը, որ տեղի պիտի ունենան բոլոր բաժանմունքներուն ու Մայրավանքի այլ յանձնարարներու ժողովները:

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի շինարարական աշխատանքներուն աւտար հանդիսանալով, շարք մը ալգալիյնէր բարեարարական անձնուէր կեցուածքով ու պատրաստակամութեամբ ընդառաջեցին վեհափառ հայրապետի փափաքին ու առատաձեռն նուիրատուութիւններով իրականութիւն դարձուցին շարք մը ծրագիրներ:

Մեր բարեարարներն են Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը՝ գլխաւորութեամբ հայկական բաժանմունքի տնօրէն դոկտ. Չաւէն Եկաւեանի (Լիպպոն), տէր և տիկին Ատոմ Թնձուկեան (Լոնտոն), տէր և տիկին Ժան Պետրոսեան (Լոս Անճելըս) և տիկին Թինա Գարոյան (Լոս Անճելըս): Յիշեալ բարեարարները սիրալոյսով ստանձնեցին նոր գրասենեակներու, «Հասկ» խմբագրատան, արխիւատան, գրատան, հիւրանոցային յարկաբաժիններու ու յարակից մասերու կառուցման ծախսերը:

Վեհափառ հայրապետը բարձրօրէն գնահատելով բարեարարները, իր հայրապետական օրհնութիւնը տալով ըստ, որ անոնց նուիրաբերումը առաջը չէ, այլ անոնք յաճախակի առիթներով օգտակար հանդիսացած են կաթողիկոսութեան զանազան ծրագիրներու իրագործման աշխատանքներուն, հրատարակչական, ուսանողական կրթաթոշակներու յատկացման, շինարարական և այլ մարզերէ ներս:

Շինարարական աշխատանքներուն և իրաքանչիւր բարեարարի նուիրաբերումին մասին յառաջիկային աւելի լայն ծանօթութիւններ պիտի տրուին:

Շինարարական աշխատանքները իրենց աւարտին պիտի հասնին յառաջիկայ մեծնամուտին, որուն պիտի յաջորդէ վեհափառ հայրապետին նախագահութեամբ շէնքերու պաշտօնական բացումը:

ԿԻԼԻԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԸՆԱՍՅՈՒԹԵԱՆ ՄԵՉ

Աւագ Շաբթուան և Ս. Յարութեան տօնական օրերուն առիթով, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի տնօրինումով Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրեր առաքուեցան թեմեր, մեր ժողովուրդի կառուցման հետ տօնախմբելու համար եկեղեցական արարողութիւններով հարուստ շաբաթը: Սոյն եկեղեցական արարողութիւններուն մասնակցելու և ապա Ապրիլեան Նահատակաց տօնին ներկայ գտնուելու համար Բերիոյ թեմ մեկնեցան Գերշ. Տ. Վարդան արք. Տեմրճեան և Հոգ. Տ. Գրիգոր վրդ. Չիֆթճեան, Կիպրոսի թեմ՝ Գերշ. Տ. Նորայր վրդ. Աշրգեան, Կոստանդնուպոլիս՝ Հոգ. Տ. Պարթեւ վրդ. Կիլիւմեան, իսկ Թեհրանի թեմ՝ Հոգ. Տ. Մաշտոց վրդ. Չոպանեան և Գեղարդ արք. Քրիստեան:

Լիբանանի թեմի եկեղեցիներուն մէջ ևս Միաբանութեան անդամներ պիտի հանդիսապետեն հոգեպարար արարողութիւններուն, ազգովին արժանաւորապէս կատարելու համար Քրիստոսի հրաշափառ Յարութեան քրիստոնէական ցնձալից տօնը:

Arabic header with logos: البيرق, الازهار, استقبال, السفير, النخيل, الدار, الخليج والصحراء

11 Ապրիլի օրաթերթերը գլխաւորաբար լուսարձակի տակ առած են քարիւղով հարուստ Քերթուքի քիւրտերուն հակա-կշիռին տակ իյնալը, Պաղտատի մէջ տիրող անիշխանական կացութիւնը, Փառլըյի յայտարարութիւնը, թէ Իրաքէն ետք ոչ մէկ երկիր պիտի հարւածուի և Ապտիւլ Մաժիտ Սուրիի պա-նութիւնը կեդրոնա-կան Իրաքի Նաժաֆ քաղաքին մէկ մկկի-թին մէջ:

«Նահար» նշած է, թէ Ապտիւլ Մաժիտ Սուրիի ահաբեկուեցաւ Նաժաֆի մէջ, իսկ պիտեալ մը ինքզինք պիտեցուց Պաղտատի կեդրոնը: Քիւրտերը շրջանցեցին թրքա-կան կարմիր գիծը՝ մուտք գործելով Քեր-քուք և Մուսուլ, իսկ Փառլըյի հաստատեց, որ Իրաքէն ետք այլ երկիրներու վրայ յար-ձակելու ծրագիրներ գոյութիւն չունին:

Ըստ թերթին, նա-խագահ Շիրաք կ'ող-ջունէ Սատամի տա-պալումը և նախա-նախապէս, որ Իրաք վերադառնալիս իր գերիշ-խանութիւնը:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, ամերիկ-կան ուժեր հաստատ-եցան Սուրիոյ հետ Իրաքի սահմանին վրայ, իսկ արաք կա-մպուրները զոհ գա-ցին Սատամի կնքած դաշինքին: Սուրիա կոչ կ'ուղղէ միջազա-յին ընտանիքին՝ կա-սեցնելու Իրաքի բռնագրաւումը, իսկ Ուաշինկթըն կը հաս-տատէ, որ ինք չի մեր-ժեր ուժեր առաքել Սուրիա:

«Պայրաք» օրաթեր-թը նշած է, թէ Ուա-շինկթըն հանգստա-ցուց Թուրքիան, հա-վարաւոր քիւրտեր Քերթուք մուտք գոր-ծելէ ետք: Մուսարաք տեսակցեցաւ Մեհուտ Ֆայսալ իշխանին հետ՝ պահանջելով Իրաքի կացութեան կայունութիւնը:

Ըստ թերթին, նա-

խագահ Լառուս ըստ, որ Իրաքի ներկայ կա-ցութիւնն ու անոր ապագան անորոշ են:

«Տիար» գրած է, թէ Պուշ և Պլէր իրաքցի ժողովուրդին կոչ կ'ուղղեն իշախ իրենց գործելու: Պատերապ-մը վերջացաւ սկսաւ ամերիկացիներուն իսկական դժուա-րութիւններու հանգր-ւանը: Անձնասպանա-կան գործողութիւն մը Պաղտատի մէջ, իսկ Սուրի կը դաշունա-հարուի Նաժաֆի մէջ: Փառլըյ կը յայտարա-րէ, որ Միացեալ Նա-հանգներ ոչ մէկ ծրա-գիր ունին Սուրիան և Իրանը հարուածելու:

Ըստ թերթին, Դա-մասկոս կոչ կ'ուղղէ կասեցնելու Իրաքի բռնագրաւումը, որ-պէսպի իրաքցիները կարենան իրենց իշ-խանութիւնը պատօ-րէն ընտրել:

Թերթը նշած է, թէ Ուաշինկթըն իրեն կը վերապահէ Իրաքի ապագային վերաբե-րող «գաղտնի բանա-լին»:

Պաղտատի տա-պալումը չի նշանա-կեր պատմութեան աւարտը և ապագայի պատկերին խափա-նումը. շրջանային վարագցումները կը պահանջեն ծայրա-գոյն աստիճանի հա-մագործակցութիւն Սուրիոյ և Լիբանանի միջեւ:

Ըստ թերթին, Իրա-յէ կը գնահատէ Պաղ-տատի «պատագրը-ման» քայլը:

Տեղական լուրերու մասին «Տիար» նշած է, թէ նախարարաց խորհուրդը գումարեց իր ընթացիկ ժողովը սովորական օրակար-գով: Հարիրի կը յայ-տարարէ, որ կը ստեն անոնք, որոնք կ'ըսեն, թէ նոր դեսպաններու նշանակման առնչու-թեամբ ինք անուններ առաջարկած է: Իսամ Ֆարէս կը մերժէ մաս կազմել նախարարա-կան երկու յանձնա-խումբերու:

Ըստ «Մուսթաք-ի պալ»-ի, Հարիրի կը նախագահէ նախա-րարական երկու յանձ-նարարներու, որոնք պիտի պահին հիւան-դանոցային և օդա-նաւային ընկերու-թեան կապուած հար-ցերու քննարկումով:

ՉԵՐՉՈՒՄ ԳԻՆԵՐՈՎ
ՈՒՆԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ - ՇՐՋԱՊՈՏՅՆԵՐ
1.- 21ին 24 Ապրիլ՝ Հայկ, Տեր 2օր, Սարկաւտ, Հասի- չէ, Փայմիթ, Դաճակոս միայն 85 \$:
2.- 4ին 11 Մայիս՝ Հայաստան փոխան 500 \$ի միայն 339 \$ նոր Airbus օդանավով:
3.- 5ին 6 Մայիս՝ Սար Ճըրճոս - Լաքաքիա «Մաշքէլ Հոլու», օրն միայն 19 \$:
4.- 24ին 28 Ապրիլ՝ Եփատոս - Շարլ և Ելյոս 5 աստ- ղանի պանդոկ, 260 \$:
Արձանագրութիւն՝ ԱՅՏԵԱՆ ԹՈՒՐԿ ԸՆՈ. 01/261177-240654 - 03/233978

ՃԱՂԿԱԶՍԱՐԴԸ
Ս. ՅԱԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ
Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, Ծաղկազարդի տօ- նին առիթով, Ս. Յակոբ եկեղեցու մէջ պիտի մա- տուցուի հանդիսաւոր Ս. պատարագ:
Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին
Ս. պատարագ ժամը 9:30ին
Եարոզ ժամը 10:30ին
Մանուկներու թափօր ժամը 11:00ին
Օրհնութիւն մանուկներու՝ դասին մէջ ժամը 11:15ին
ԴՆԱՐԱՅԵԻ արարողութիւնը տեղի պիտի ունե- նայ, երեկոյեան ժամը 4:30ին
Արարողութիւնը պիտի կատարէ և քարոզէ՝
ԳԵՐՉ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԷՂԵԱՆ
Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութիւն- ներուն:
Ս. ՅԱԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆԻ» ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՅԱՅՍԱԳԻՐՆԵՐԸ
● ժամը 8:45
«Աստղեր»
● ժամը 10:00
«Մշակութային լրատու»
● ժամը 12:00
«Մարտի պահենք հայերնը»
Յախաղովստ
● ժամը 1:30
«Մանուկներու աշխարհ»
● ժամը 2:40
«Շայ Դատը այսօր»
● ժամը 5:30
Հարցազրոյց՝ Ե.Ե.Ը. Անդրանիկ մարզական խումբերու պատասխանատու Վիգէն Չերչեանի և աղջկանց խումբին խմբապետուհի՝ Սօսի Ենիթրոշեանի հետ:
● ժամը 6:00
«Շայ երգաշարի»

ԻՆՉ Կ'ՈՒՉԵՆՔ ՄԵՆՔ

Եթէ պահ մը փորձենք համեմատել ամբողջ աշխարհի, իսկ վերջերս՝ նաեւ մեր շրջանին մէջ սկիզբ առած հակապահանջ փոփոխութիւնները Հայաստանի մէջ տեղի ունեցող գործընթացներուն հետ, անմիջապէս պիտի արձանագրենք անոնց լիակատար անհամապատասխանութիւնը:

Մեր ազգային - քաղաքական միտքին խնդիրը ոչ միայն Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքին մէջ ընդհանուր յայտնի վտանգաւոր միտումներու վերլուծումն է, այլ նաեւ՝ բացայայտումը անոնց իրական պատճառներուն, որոնք մինչեւ այսօր քողարկուած են հասարակութեան աչքէն՝ թաքնուելով տեսակ-տեսակ առասպելներուն եւ անոնց կրողը դարձած կեղծ ընտրախաւերուն շղարշին տակ: Մինչդեռ իրականութիւնը այն է, որ ներկայիս ոչ առասպել ունինք՝ այդ բառին դրական ըմբռնումով, եւ ոչ ալ ընտրախաւ՝ ըլլալ ան քաղաքականութեան, տնտեսական կեանքին կամ որեւէ այլ ապարէզի մէջ:

Բոլոր մակարդակներուն վրայ ներկայիս երկրին մէջ ծաւալող գործընթացներուն մէջ կ'արձանագրուի գլխաւորաբար անհատներու կամ անոնց ոչ մեծ խումբերու մրցակցութիւն, որ տեղ մը կը բողբոզուի, իսկ ուրիշ տեղ մը յիշուի չի ալ փորձեր բողբոզուի: Երբեք գաղափարաբարտական շղարշով: Այսպիսի ծածկոցները չեն կրնար թաքնուիլ այն փաստը, որ ասպարէզին մէջ չկայ որեւէ ընդհանուր, հաւաքական խնդիր, որ կ'արտացոլէ ներկայ քառասուն շարժումներուն մէջ իրարու բախող անհատական եւ խմբակային նպատակներու ու ձգտումներու բիւրեղացման համագաղափար, համապետական եւ նոյնիսկ նեղ կուսակցական հայեցակէտը:

Ներկայ իրականութիւնը փոխադարձաբար զիրար վանող մասնիկներու քառասուն շարժում մըն է, որուն կարգաւորումը կեղծ պատրանք կ'ապահովուի քաղաքականութեան, տնտեսութեան եւ այլ ոլորտներու շուրջ պտտող տեսակ-տեսակ անհատներու յաջողած եւ անյաջող դերասանութեան միջոցով: Դերասանութիւնը մեր մէջ այսօր ոչ թէ նեղ մասնագիտութիւն մըն է, այլ՝ համագաղափար եւ համապետական թիւ մէկ զբաղմունքը:

Քաղաքական կեանքին մէջ ան կը զրոսեւորուի մարդոց այս կամ այն խումբը խաբելու եւ անոնց բռնէները կործելու համար ձեռնարկուող հրմշտոցի տեսքով: Տնտեսական կեանքին մէջ՝ պետութեան եւ սեփական մրցակիցները «տապալելու» փորձերուն տեսքով: Հոգեւոր մշակութային մարզին մէջ՝ կեղծ հաւատացեալի եւ նոյնիսկ սուրբի կերպարանք ըն-

դունելու միջոցով: Այսպիսի համընդհանուր բարոյագրկում յանդեցուցած է անոր, որ մեր կեանքը անօրինող կառոյցները դարձած են շրջուած բուրդեր, որոնք կը ծառայեն ոչ թէ իրենց նպատակին, այլ՝ այդ նպատակը բացասելու գործին:

Այս պայմաններուն մէջ որեւէ հասարակութիւն եւ պետութիւն իր կենսունակութիւնը կ'արտայայտէ ոչ թէ երթալով աւելի ու աւելի ակնյայտ դարձող քառասին մէջ ներգրաւուած անհատներու ու խումբերու գործողութիւնները ընդօրինակելով կամ ալ՝ նմանակումի բնոյթի հակադրութիւններու դաշտ ստեղծելով, այլ տուեալ երեւոյթին՝ իրեն մէկ ամբողջութիւն, բուն պատճառներուն բացայայտումով: Այսպիսի աշխատանքի մը միջոցով է միայն որ իրական ընտրանիքն զուրկ հասարակութիւնը իր մէջէն կը ձեւաւորէ իսկական ընտրանի, որ կը դառնայ պետութեան առջեւ կանգնած դրական խնդիրներուն կրողը:

Պահուն հրամայականը հետեւեալ ակնյայտ իրողութեան արձանագրութիւնն է, ներկայ ճգնաժամին եւ իրեն անոր պատճառ համընդհանուր բարոյագրկումին ու ապարարոյթականացման պատճառը զիրար վանող առանձին անհատներու կամ անոնց խումբերուն անիմաստ ու ծիծաղելի դերասանութիւնները չեն, այլ՝ անոնց պատճառն ու հիմքը կազմող այն իրողութիւնը, որ մեր պետութիւնն ու հասարակութիւնը կը շարունակէ տառապիլ իր գոյութեան բուն իմաստը կազմող զուրկ հատկանիքներով եւ անկէ բխող դրական նպատակի բացակայութեան պատճառով:


Խնդիրը այն է, որ իրեն պետականօրէն կազմակերպուած ազգ. մենք տակաւին չենք որոշած, թէ դրական - կառուցողական իմաստով իրեն հաւաքականութիւն ի՞նչ կ'ուզենք մեր եւ աշխարհին համար, այսինքն՝ ի՞նչ կը պատրաստուինք կառուցել երկրին մէջ, եթէ ան ըլլալ մեր երազած ամէնէն հարուստը, ամէնէն ժողովրդավարականը, ամէնէն միացեալը եւ այլն, եւ այլն:

Քանի այդ մէկը չենք յստակացուցած, ինչ ալ ընենք, միեւնոյն է, չենք կրնար դուրս գալ մեզ համակած քառասին, որովհետեւ ատոր համար անհրաժեշտ է դիտակցուած ապագայի վրայ հիմնուած բանական ընտրութիւն: Առանց այսպիսի իտէլալի, ներկայ քառասին մեզի պիտի տանի դէպի արագ կործանում կամ ալ դանդաղ քայքայում:

ԳԵՌՐԳ ԽՈՒԳԻՆԵԱՆ

«Հայոց Աշխարհ»
(Արեւմտահայերէնի վերածուած)

ՓԱՐԻԶԷՆ «ԿԱՄՔ» ԵՒՍ ԿԸ ՄԻԱՆԱՅ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՅՔԵՐՈՒՄ



Կարիքը չկայ կրկին ու կրկին խօսելու համացանցի կարեւորութեան մասին իրեն փրկեցողութեան գերազուց միջոց: Այս գիտակցութեան մեկնած՝ դաշնակցական մամուլը անցնող փորձերուն ասպարէզը իր ներկայութիւնը հասարակութեան աչքէն վերազատելու համար անհրաժեշտ է կրկին փորձերը կարեւորութեան հարցը վերադարձնելու: Այս փորձերը կ'արտայայտուի «Կամք»-ի կայքէջի վրայ, որ համացանցի միջոցով կ'արտայայտուի անհատական կարծիքները, որոնք կ'արտայայտուի անհատական կարծիքներով, որ ստանձնել եւ պատմական պատասխանատուութիւնը կ'ապահովուի շաբաթի հետապնդումը, մեր ժողովրդի դարավոր իրաւունքը:

նով, անգլերէնով, ֆրանսերէնով եւ սպաներէնով: Սպորտի կը ներկայացուցնէր Հ. Յ. Դ. մամուլի փարքեր կայքերու հասցեները:

- «Ազդակ» (հայերէն) www.aztagdaily.com
- «Ազար օր» (հայերէն) www.azator.com
- «Ալիք» (հայերէն) www.alikonLine.com
- «Գրօշակ» (հայերէն) www.arf.am/Armenia/droshak
- «Երկիր» (հայերէն, անգլերէն) www.yerki.am
- «Հայրենիք» (հայերէն, անգլերէն) www.hairenik.com
- «Ասպարէզ» (անգլերէն) www.asbarez.com
- «Կամք» (հայերէն, ֆրանսերէն) www.gamkonLine.com
- «Կայծեր» (հայերէն) www.gaydzer.am
- «Արմենիա» (սպաներէն) www.diarioarmenia.org.ar

Ուրախալի երկուրդ է վերջերս համացանցի միջոցով Հ. Յ. Դ. մամուլի նրկու հրապարակութիւններու վերակրումը: Խօսքը կը վերաբերի Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի պաշտօնաթերք «Կամք»-ի, որ վերածուած է էլեկտրոնային երկրէն (ֆրանսերէն եւ հայերէն) քերթի (www.gamkonLine.com), ինչպէս նաեւ Հ. Յ. Դ. Երիտասարդական Միութիւններու հրապարակութիւն «Կայծեր»-ի (www.gaydzer.am): Կասկած չկայ, որ համացանցի վրայ օրրապօրէն աւելի աշխուժ ներկայութիւնը կը դառնայ Հ. Յ. Դ. մամուլը, զոր այսօր կրնանք կարգաւ հայերէն-

ԳԵՌՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Մ. Գ. Մրցանակի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ. Մ. Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական ոլորտէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր առ ի գնահատուած եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ հայ մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասան ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք օրինակով: Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւազդ արք. Թրթեան, Չարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեորգ Գանտահարեան (ատենապետ), տիար Պետո Սիմոնեան (ատենադպիր), տոքթ. Արմենակ Եղիայեան, տիար Պողոս Սնայեան եւ տիար Ժիրայր Դանիելեան:

Դատակազմին հասցէ.-
Armenian Catholicosate of Cilicia
P. O. Box 70317
Antelias - Lebanon
E - Mail: cathcil@cathcil.org
Fax: +961 - 4 - 419 724

Դիւան
Գ. Մ. Գ. Մ.ի Դատակազմ

ԾԱՆՈԹ.- Դատակազմին զրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիլ: Դիտողներէն կը խնդրուի որոշ նախաձեռնութիւններու ցոյց տալ լեզուական եւ ուղղագրական բաժիններուն:

ԱՏԻ
ՄԵՏԵՐ ՇԷՆԵ Բ. ՅԱԲԷ
ՆՈՒ. 01/242556-7

ՁԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԺԻՆ ԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՎԱՏԱՏԵՑԷՔ Ա Տ Ի Լ - Ի

«ԱԶԳԱԿ»-ի
ՀԵՆՍԱՋԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու
համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526,
260115 եւ 241274:

ԾԱՂԱԿԱՆՍՏՐԱՆ ԺՈՒՆԻԷՒ
Ս. ՅԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՐ ՄԵՉ

Ժուճիկ, Անթիլիասի, Չալքայի եւ շրջակայից Ս. Յարութիւն Եկեղեցւոյ քաղաքացիները կու գայ յայտարարելու, թէ յառաջիկայ Կիրակի, 13 Ապրիլ 2003ին, տօնն է Եղեղեցւոյ: Առ այդ, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ՝

ԵՂԵՑ. Ս. ՓԱՌԷՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Առաւօտեան ժամերգութիւն	7:30ին
Սկիզբ Սուրբ պատարագի	9:30ին
Քարոզ	11:00ին
Մանուկներու թափօր	11:30ին

Նաեւ երեկոյեան ԴՆԱԲԱՅԵԸ արարողութիւն տեղի պիտի ունենայ կէսօրէ ետք ժամը 4:00ին: Արարողութեան պիտի հանդիսապետէ՝

ԵՂԵՑ. Ս. ՎԱՐԱԳ ՎՐԴ. ԹՕՓԱՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու տոյն հոգեպարար արարողութիւններուն:

ԺՈՒՆԻԷՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՐ
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

FUEL CARD
IGOL

ՊԵՆՁԻՆԻ ԳՆՄԱՆ, ԻՆՉԱԿԵՆ ՆԱԵԻ ԾԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒՆ ԽԻՂԸ ՓՈԽԵԼՈՒ
Կամ զանոնք լուալու պարագային:

Երբ մագուիթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով
04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

▶ MANAR - Տորա	▶ MALLAH - Չարեհ Ղաուարնէ
▶ ԱՍՐԳԻՍԵԱՆ - Պուրծ Գամուտ	▶ MALLAH - Պաւլիմ
▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ	▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ» մօտ	▶ CORAL - Էշնեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
▶ SPEED - Գանգաշ, Կալէրի Իթքիատ	▶ SAAD - Մար Սիպայի
▶ ԳՅԱԿԱՎԱՆ ԿՅԱՐԱՐ - «Ալմազա»	▶ SPEED - Նաիր, «Փէօժօ» ընկերութեան մօտ
▶ MALLAH - Անթիլիաս, կաթոնիկոսարանի դիմաց	▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
	▶ MALLAH - Պապատէք

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՉ
ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»-ի մէջ յրեւե ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը յղեն հրատարակչին՝ ծանուցումներու բաժնումը հասցեն հրատարակչին թուակազմէն առնուած օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՋՁԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազղ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Մանկապատանեկան

ՏՈՒՐՄԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ երկու-երեք շաբաթներում ընթացքին մենք բաւական տուրմ պիտի ուտենք, հաւկիթի ձեւով, ցաւաստակի ձեւով, գանգակի ձեւով...

Սակայն ուրկե՞ եկած է այս տարօրինակ ուտելիքը, որ այնքա՞ն սիրուած է եւ միշտ պիտի սիրուի աշխարհի չորս կողմերը:

Երեք հազար տարի առաջ Մեքսիքայի մէջ օլմէք հնդիկները կը նշամարեն, թէ կապիկները տարօրինակ թուփի մը պտուղները կը կտրեն եւ կը կրծեն անոր հատիկները: Հնդիկները կը մտածեն քանի մը հատիկ խորովել...

Հը՞ մամ... համը գէշ չէ. ընդհակառակը: Այս ձեւով անոնք կը գտնեն քաբան: Հազար երեք հարիւր տարի ետք ազթէք հնդիկները կը յաջորդեն օլմէքներուն: Անոնք քաբանի սիրահարներ են: Անոնք թագաւորը գայն կը ճաշակէ տաք, ընտրով խառնուած,

ուսկիէ գաւաթի մը մէջ: Ան կ'ըսէ, թէ այս գարմանալի խմիչքը զինք կը մօտեցնէ շատուածներուն...

1502 թուականին Բրիտանացի Քոլումպոս կը հասնի Մեքսիքա, ազթէքներուն մօտ: Ան «կը ծանօթանայ» քաբանի



հատիկներուն, որոնք իրեն ուտելիք կը գործածին հնդիկներուն կողմէ... սակայն նաեւ՝ իրեն զրամ: Քոլումպոս կը համոտեսէ... եւ բնաւ համեղ չի գտներ գայն:

1519 թուականին սպանացի Հեռնան Քորթէս կը տիրանայ Մեքսիքայի: Անոր ընկերակցող հոգեւորականները կը հնարեն միջոց մը՝ քաբան պատրաստելու եւ գայն տուրմի վերածելու համար: Քորթէս այս տուրմը

տուրմը: Ան շատ շուտ վերջին «նորոյթը» կը դառնայ ամբողջ երկրին մէջ: Տուրմը համեղ խմիչք մըն է, սակայն նոյն ատեն՝ կազդուրիչ դեղ մը:

Հեռնան Քորթէսէն հարիւր տարի ետք Յրանսայի Լուի 13րդ թագաւորը կ'ամուսնանայ Սպանիոյ թագաւորին աղջկան՝ Աննայի հետ: Աննա

շատ կը սիրէ տուրմ խմել եւ իր սէրը կը փոխանցէ իր նոր երկրի ժողովուրդին:

Քանի մը տարի ետք անգլիացիներն ալ «կը ծանօթանան» տուրմին: Անգլիացի առեւտրական մը կը հնարէ նոր ձեւ մը տուրմը ճաշակելու՝ ան տուրմը կը վերածէ փոքր կաղապարներու, որոնք այսօրուան տուրմին «նախահայր»ներն են:

ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՏՈՒՐՄԸ




Ահա, թէ ինչպէս տուրմը ծառի վրայէն կը հասնի միջեւ ցաւրաւիւններին ըրով:

1) Քաբանի թուփը կ'աճի միայն Ափրիկէի եւ Լատին ու Կեդրոնական Ամերիկայի կարգ մը երկրներու մէջ: Ան շատ դժուար է եւ չի դիմանար ցուրտին, տաքին եւ հովին: Հետեւաբար գայն կը տնկեն պահպանուած տեղ մը, աւելի բարձր ու դիմացկուն ծառերու մէջտեղը:

2) Քաբանի թուփին պտուղները կը նմանին

նրկպիտի պզտիկ գնդակներու: Զանոնք կը քաղեն



եւ կը բանան՝ անոնց մէջ գտնուող հունտերը առնելու համար:

3) Այս հունտերը կը հաւաքեն եւ մեծ կոյտեր կը կազմեն: Վեց օրերու ընթացքին այս հատիկները կը փոխուին եւ կարմիր

կը դառնան: Ապա գանոնք կը տարածեն խորներու վրայ՝ արեւուն տակ չորցնելու համար:

4) Ապա այս հատիկները զգուշացնուած կը խորհուրդին յատուկ մեքենայի մը մէջ, որ նաեւ գանոնք կը կեղուէ:

5) Ուրիշ մեքենայի մը մէջ հատիկները կ'աղան եւ շատ իւղոտ սրճագոյն խմոր մը կը կազմեն:

6) Այս ձեւով կը ստացուին քաբանի կարգը եւ քաբանի փոշին:

7) Այս խմորին վրայ կ'աւելցուի շաքար: Ապա խառնուրդը քանի մը օրերու ընթացքին երբեմն-երբեմն կը խառնուի:

8) Վերջապէս, խմորը կը պարպուի կաղապարի մը մէջ: Ան շատ շուտ կը կարծրանայ:

Հիմա մարդիկ կրնան գայն թղթիկներու մէջ փաթեթել, եւ անիկ պատրաստ է կրծուելու:

ԶԵՆՈՒՄԻՆ ԱՃԻՍՏԱՆԸ ԶԱՏԿՈՒԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ

Ինչպէս ամէն տարի, ըստ սովորութեան, այս տարի ալ Զատիկին հաւկիթներ պիտի ներկեն եւ զարդարեն:


Այս սիւնակին մէջ պիտի գտնես քանի մը գաղափարներ՝ զանոնք գեղեցիկ ձեւով ներկայացընելու:

ՀԱՒԸ
- Պէտք ունիս -

Ճերմակ եւ բարակ խաւքարտէ երկրի մը (29 x 5 սմ), գունաւոր խաւքարտէ երկրի մը (19 x 5 սմ եւ 10 x 4 սմ), խէժի, մածունի կերպընկալէ պարագ պզտիկ ամանի մը:

1) Ա. պատկերին չափերը գծէ ճերմակ խաւքարտէ երկրի վրայ եւ իւրաքանչիւր բաժին ներկէ նշուած գոյներով: Միջակ խաւքարտէ երկրի զարդարէ ներկերով:

2) Երկար երկրի կարմիր բաժինները ծալէ եւ փակցուր իրարու: Կատարին բաժինը կտրէ, ինչպէս





նաեւ՝ կարմիր կտուցը եւ մնացած խաւքարտէ երկրի (պատկեր Գ):


3) Մածունի կ'երպընկալէ պզտիկ ամանին ծայրի բաժինը կտրէ: Անոր վրայ փակցուր հաւուն մարմինը եւ պոչը (պատկեր Գ):

4) իւրաքանչիւր զարդարուած միջակ երկրի փակցուր ամանին շուրջը:

Ամանը պատրաստ է: Կրնաս մէջը դնել ներկուած հաւկիթ մը:




Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս իւրաքանչիւր մարզիկի վերադարձնել իրեն պէտք եղած առարկան:



Սուզուող մարզիկը պէտք է լաբիրինթոստ անցնի վարի գանձին հասնելու համար: Անոր ճամբան կազմուած է միշտ նոյն 5 տուփիկներէն, որոնք իրարու կը հետեւին. պզտիկ ձուկ մը, ընգղայ մը, մեծ ձուկ մը, ծովամայր մը, եւ ծովային աստղ մը:





Այս խաղը կրնաս խաղալ ընկերոջ մը հետ: Իւրաքանչիւրը իր կարգին «զարդ» կը նետէ եւ իր քարը կը յառաջացնէ մինչեւ վերջին տուփիկը: Ուշադրութիւն. պէտք է հետեւիլ սլաքներուն, որոնք յառաջխաղացը պիտի դաճողեցնեն կամ արագացնեն:



Հիմա մարդիկ կրնան գայն թղթիկներու մէջ փաթեթել, եւ անիկ պատրաստ է կրծուելու:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. - ԻՍԼԱՅ ՊԵՐԺ ՇԻՄԱԼԻ ՄՐՑՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանության 23րդ եւ նախավերջին հանգրուանի բացման մրցումին, երէկ, Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Ռիատա Ուալ Ստապ - Ռասիկ հանդիպումը, որ վերջ գտաւ Պէյրութի կազմին յաղթանակով՝ 3 - 1:

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը անցեալ Հինգշաբթի օր իր գումարած ժողովին հրապարակեց Լիբանանի ֆուտբոլի բաժակի մրցաշարին քառորդ աւարտականի երրորդ մրցումները, ինչպէս նաեւ կարգ մը փոփոխութիւններ կատարեց շաբաթավերջին տեղի ունենալիք Բ. դասակարգի ախոյեանության մրցումներուն գծով:

Ֆետերասիոնին կողմէ հրապարակուած նոր յայտագիրին հիմամբ, Հ.Մ.Ը.Մ. իր մրցումը պիտի կատարէ այսօր եւ ոչ վաղը, ինչպէս նախապէս որոշուած էր: Հ.Մ.Ը.Մ. - Իսլահ Պըրժ Շիմալի մրցումը տեղի պիտի ունենայ Պուրժ Շիմալիի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ժամը 4:00ին, Իսկ բաժակի մրցաշարին գծով, Հ.Մ.Ը.Մ. երթի իր մրցումը պիտի կատարէ Չորեքշաբթի, 30 Ապրիլին. ան Պուրժ Շիմալիի Քաղաքապետարանի դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Ա. դասակարգի ախոյեանության ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող խումբը՝ Ստըր:

Ֆետերասիոնը վաւերացնելէ ետք անցեալ երեքշաբթի օր տեղի ունեցած Իսլահ Պըրժ Շիմալիի - Հ.Մ.Մ. մրցումին արդիւնքը, որ վերջ գտաւ ի նպաստ Հ.Մ.Մ.ի, մէկ ամսով կախակայեց Հ.Մ.Մ.ի մարզիկներէն Ատիամ Ղատարը, որ Իսլահի դէմ մրցումին կարմիր քարտ ստացած էր:

Իսլահի մարզիկներէն՝ Ուիսամ Չէյն եւ Ժիհաւ Չիաթ, որոնք մէկական մրցումով կախակայուեցան իրենց երրորդ դեղին քարտը ստացած ըլլալուն համար, պիտի բացակային այսօր Հ.Մ.Ը.Մ.ի դէմ մրցումին:

Հ.Մ.Ը.Մ. ԳԲ ԳՊԻՐԻ անպարտելի միակ խումբն է, իր հիւսիսարիւմ համակիրներուն ներկայութեան իր ամէն կարելին պէտք է ընէ արձանագրելու համար եղանակի իր 17րդ յաղթանակը:

ԱՍՈՐԵԻ՝ 23րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 4:00ին).

ԱՅՍՕՐ	ԴԱՇՏ
Շապապ Սահէլ - Հ.Մ.Մ.	Թրիփոլի
Հ.Մ.Ը.Մ. - Իսլահ Պըրժ Շիմալի	Պ. Համուտ

ՎԱԳԸ	ՍՈՐ
Ալի Սայտա - Նահուա Պար Էլիսա	Սուր
Հըրրիէ - Մահապպա	Խիարա
Իժթիմահի - Թատամոն Նապաթիէ	Թրիփոլի

● ԱՍՈՐԵԻ Լիբանանի ֆուտբոլի բաժակի մրցաշարին քառորդ աւարտականի երրորդ մրցումներուն յայտագիրը.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Անասր - Օլիմփիք	4:30ին	Պէյրութ
Հ.Մ.Ը.Մ. - Ահա	4:30ին	Պ. Համուտ
Իսլահ - Սայամ	4:30ին	Սուր
Նըժմէ - Թատամոն Սուր	7:30ին	Ս. Աւան

ՖՈՒԹՊՈԼ

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ - ԺԻՀԱՏ ՀԱՏԱՍ

Լիբանանի ֆուտբոլի Գ. դասակարգի ախոյեանության 5րդ հանգրուանի մրցումներուն, այսօր, Պըրժի դաշտին վրայ Հ. Մ. Ը. Մ. Պուրժ Համուտի խումբը կը մրցի Ժիհատ Հատասի դէմ, կէսօրէ ետք ժամը 4:00ին:

Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանության 24րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն նախօրեակին, Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի համակիրներու յանձնախումբը, խումբին համակիրները կը հրահարէ արտաքս վրոյց-հանդիպումի մը՝ խումբին պատասխանատուներուն եւ մարզիչին հետ:

Չորոց-հանդիպումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 14 Ապրիլ, երեկոյան ժամը 8ըրդ 7:30ին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի արահին մէջ:

ՖՈՒԹՊՈԼԻ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթավերջին, Եւրոպայի մէջ տեղի կ'ունենան ֆուտբոլի ազգային ախոյեանության մրցումներ, որոնց ընթացքին կը սպասուին բաւական հետաքրքրական եւ տաք ճակատումներ:

Սպանիոյ մէջ տեղի պիտի ունենան հետաքրքրական երկու մրցումներ, որոնց ընթացքին Պարսելոնա պիտի հիւրընկալէ Տեֆորթիօ Քորուան, իսկ Ռէալ Մադրիտը՝ Կարտեռոն հանդիպում մը պիտի ըլլայ նաեւ Սելթա Վիլո - Ռէալ Պեթիս ճակատումը, Անգլիոյ մէջ Մանչեսթըր Եունայթըտ բաւական կարեւոր մրցում մը ունի Նիքէսթըրի դէմ: Յաղթանակի մը պարագային, Մանչեսթըր պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, որովհետեւ Արսենալ շաբաթավերջին ախոյեանության գծով մրցում չունի կատարելիք: Լոնտոնեան կազմը վաղը «Օլտ Թրէֆորտ»ի մէջ պիտի ճակատի Շեֆիլտ Եունայթըտի դէմ, Անգլիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարին կ'աւարտականին գծով: Յրանսայի մէջ, Մարսէյ պիտի փորձէ այլ ծուղակի մը մէջ չիչնայ, երբ այցելէ վերջին դիրքը գրաւող Թրուայի դաշտը:

Իտալիոյ մէջ եւս տեղի պիտի ունենան հետաքրքրական ճակատումներ: Միլանօ քաղաքի տերպին՝ Ա. Սէ. Միլանի եւ Ինթեր Միլանի միջեւ պիտի գրաւէ յուսարձակները, իսկ պարագլուխի դիրքը գրաւող Եուվէնթոսն այցելէ Պոլոնիայի դաշտը:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

● ՖՐԱՆՍԱ (33րդ հանգրուան)	Թրուա - Մարսէյ
Փարիզ Ս. ժ. - Լանս	Ամաքսիօ - Մոնպո
Կենկան - Պարիս	Լը Հաւրը - Ռենն
Պորտօ - Լիոն	Մոնպելիէ - Սոչօ
Նիս - Օքսէր	Սթրասպուրկ - Նանթ
Լիլ - Ստուան	
● ՊՈՒՆՏՆԱԿԱՆ (28րդ հանգրուան)	Քալպրուալուօրն - Հանպա Ռոսթրք
Պայէրն Միւնիխ - Վերտըր Պրեմըն	

Արմինիա Պիրֆէլտ - 1860 Միւնիխ
Հերթա Պերլին - Պոխուս
Շթուրկարթ - Պայէր
Լեւերքուլըն
Համպուրկ - Պորուսիա
Պորուսիա Մէօնշ. - Նիւրնպերկ

● ՍՊԱՆԻԱ (29րդ հանգրուան)

Սելթա Վիլո - Վիարեալ
Պարսելոնա - Տեֆորթիօ Քորուան

● ԱՆԳԼԻԱ (29րդ հանգրուան)

Արթըթիօ Մատրիտ - Էսփանիոլ
Սելթա Վիլո - Ռէալ Պեթիս
Մայորքա - Ռասինկ
Սանթանտեր
Նալո Վալեթանօ - Արթըթիօ Պիլաօ
Ռէալ Մադրիտ - Ռէալ Մատրիտ
Մալալա - Ռէալ Վալադոլիտ
Ռ. Հուելիվա - Ալաւէս

● ԱՆԳԼԻԱ (33րդ հանգրուան)

Պիւլսքրօն - Սանտրլիքս
Պիլսքրօն - Չարլթըն
Չէլսի - Պոլլըն
Լիօ - Թորքենհամ
Լիվըրքուլ - Ֆուլհէմ
Մանչեսթըր Սիթի - Միտլըվպորտ
Նիքէսթըր - Մանչ. Եունայթըտ
Ռեյք Պրոմուիշ - Էվըրթըն
Ռեյք Համ - Ասթօն Վիլա

● ԳԵՐՄԱՆԻԱ (28րդ հանգրուան)

Բուն - Փերուճիա
Ինթեր Միլան - Ա. Սէ. Միլան
ՎԱԳԸ (Անգլիոյ բաժակ)
Շեֆիլտ Եունայթըտ - Արսենալ
● ԲԱՆԻԱ (28րդ հանգրուան)

Քուն - Փերուճիա
Ինթեր Միլան - Ա. Սէ. Միլան
ՎԱԳԸ
Արալանթա - Ռեճինա
Պոլոնիա - Եուվէնթոս
Էմիլիոյի - Քիեռօ
Մոնտեան - Լազիօ Ռոմա
Ա. Էս. Ռոմա - Փարմա
Թորինօ - Փիաչենցա
Ուտինէպէ - Պրեշիա

ԷՍ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹԵՑ

ԷՍ. ՊԻ. Էյ.ի երէկեան մրցումներուն, Լոս Անճելըսի մէջ, Լէյքըրկ 117-104 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սաքրամենթօ Քիւկլը: Յաղթական կազմին մարզիկներէն Շաքիլ Օսիլ նշանակեց 32 կէտ եւ 16 ռիպանուտ, իսկ անոր իմբակից Բոպէ Պարթընը՝ 34 կէտ: Քիւկլի մարզիկներէն Քրիս Ուեյլըր եւ Մայք Պիպի նշանակեցին 24ական կէտ:



Բոպէ Պարթընը (ձախից) եւ Շաքիլ Օսիլ

Երէկուան երկրորդ եւ վերջին մրցումին, Պոսթըրնի մէջ Սելթիքս 99-78 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նշէնք, թէ երէկուան մրցումներուն իրարու դէմ ճակատող չորս խումբերն ալ արդէն իսկ ապահոված ինչիլէյօֆի մրցումներուն իրենց տոմսերը:

ԼԵՎԱՍ

ՀԱԲԱԹԱՎԵՐՁԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Շաբաթավերջին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. Ի - ԼԵՎԱՍԻ պասթբոլի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

ՀԱՐԱԹ. 12 ԱՊՐԻԼ	ԺԱՄ
Միջակ աղջիկներ - Գ. Բ. Վ. - Ս. Ազնէս	2:00
Միջակ տղաք - Հայ Աւետ. Այնճար - Գ. Բ. Վ.	2:45
Միջակ տղաք - Ս. Հոնիփսիմեանց - Ս. Յակոբեան	3:30
Մեծ տղաք - Ս. Հոնիփսիմեանց - Ս. Ազնէս	4:15
Միջակ տղաք - ձեմարան - Յառաք	5:00

ԿԵՐԱԿԵ. 13 ԱՊՐԻԼ	ԺԱՄ
Միջակ աղջիկներ - Մեարոպեան - Յառաք	3:00
Մեծ աղջիկներ - ձեմարան - Մեարոպեան	4:00
Մեծ տղաք - ձեմարան - Եղիշէ Մանուկեան	5:00

ԳՐԱՌՈՒԱԾ ՕՐ

Հ. Մ. Ը. Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
85ԱՍԵԱԿԻ ՊԱՐԱՇԱՆԴԵՍ
31 ՄԱՅԻՍ 2003

ՖԻԶԻԿԵԼԼԱ ՀՈՉԱԿՈՒԵՅԱԻ ՊՐԱՉԻԼԻ ԿՐԱՆ ՓՐԻԻՆ ՅԱՂԹԱԿԱՆԸ



Ֆիզիքելլա

Ֆորմիլա-1ի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ անցեալ կիրակի օր տեղի ունեցած Պրաչիլի կրան փրիին յաղթականը կը ինչպիսի ձորտընի իտալացի վարորդ Ճիան-քարլօ Ֆիլիքելլա, որ այդ կրան փրիին աւարտէն անմիջապէս ետք յայտարարուած էր, որ գրաւեց 2րդ դիրքը: Մաքլարընի ֆիլիանտացի վարորդ Քիմի Ռայթընընի ետին: Անոնց ետին գտնուողներուն շարքը կը մնայ անփոփոխ:

Պրաչիլի այդ կրան փրիին կիսատ մնալէն ետք (55րդ լէփին), յայտարարուած էր, որ Ռայթընըն ինք է յաղթականը: Սակայն Ֆորմիլա-1ի պատասխանատուները մանրամասն կերպով հարցը քննելէ ետք պաշտօնապէս ըսին, որ Ֆիլիքելլա արդէն իսկ 56րդ լէփը սկսած էր, երբ կրան փրիին կիսատ մնաց: Այդ մէկը կը նշանակէ, որ 54րդ լէփին աւարտին, ան կը գերազանցէր Ռայթընընը եւ Ռոնտի սպանացի վարորդ Ֆենուանտօ Ալոնզոն (3րդ):

Ֆորմիլա-1ի մրցումներուն, այսպիսով 30 տարեկան Ֆիլիքելլա կ'արձանագրէ իր առաջին յաղթանակը՝ 101 կրան փրիներու ընթացքին, իսկ ձորտըն իր չորրորդ յաղթանակը՝ 200 կրան փրիներու ընթացքին:

Առաջին անգամ ըլլալով է, որ Ֆորմիլա-1 պատասխանատուները մէջ կրան փրիի մը արդիւնքը փոփոխութեան կ'ենթարկուին, առանց սակայն վարորդ մը արժեպրկելու, կամ անոր կատարած սխալին համար պատիժ մը տալու:

Ստորեւ՝ վարորդներուն նոր դասաւորումը, այդ կրան փրիին յաղթականը փոխուելէ ետք.

ԿԷՏ	
1.- Զիմի Ռայթընըն (Ֆիլի.) Մաքլարըն	24
2.- Տէյվիտ Զուլթարտ (Քրիտ.) Մաքլարըն	15
3.- Ֆենուանտօ Ալոնզօ (Սպանիա) Ռընօ	14
4.- Ճիանքարլօ Ֆիզիքելլա (Իտ.) Չորտըն	10
5.- Եանտօ Թրուի (Իտալիա) Ռընօ	9
6.- Ն. Փ. Մոնթոյա (Զուլմալիա) Ուիլիըմս	8
Ռուպէն Գարիքելլօ (Պրաչիլ) Ֆեարի	8
Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆեարի	8
Ռալֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիըմս	8
10.- Հայնց-Հար. Ֆրեյցըն (Գերմ.) Սաուպըր	7
11.- Շաք Վիլեթօլ (Քրիտանիա) ՊԱՐ	2
13.- Նիք Հիտֆէլտ (Գերմանիա) Սաուպըր	1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ՎԱՀՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԸԵՐԵՃԵԱՆ ԹԱՏՐԵԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆՔ»Ի

2003 Ապրիլին հաստատուած է «Վահրիճ եւ Վերժին ձերձեան Թատրերգութեան Մրցանք»ը՝ ի յիշատակ հասարակական գործիչ եւ մտաւորական Վահրիճ ձերձեանի, սատարելու համար Սփիւրջի մէջ բաւարարական գրականութեան զարգացման:

Մասնակցութեան պայմաններն են. ա) Մրցանքին կրնան մասնակցիլ Սփիւրջահայ այն բոլոր գրողները, որոնք հայերէնով գրուած բաւարարութեան մը, կամ բաւարարութեաններու փունջ մը, կը ներկայացրեն ղատակազմին:

բ) Ներկայացուած բաւարարութիւնը ըլլալու է անտիպ, մեքենագրուած կամ համակարգիչի վրայ շարուած, երկու օրինակով:

գ) Մրցանակի արժանացած բաւարարութեան նիւթակն պարզեւ 3000 ամերիկեան տոլար է: Երկին հրատարակութեան ծախսերը կը հոգացուին հիմնադրամին կողմէ՝ իբրեւ «Վահրիճ եւ Վերժին ձերձեան Թատրերգութեան Մրցանք»ի մատենաշար:

դ) Երկերը հասցնելու պայմանաժամն է 30 Սեպտեմբեր 2003:

ե) Դատակազմի անդամներն են. Վերժին ձերձեան, Ժիրայր Դանիէլեան, Տոքթ. Արմենակ Եղիայեան, Պեպօ Սիմոնեան, Պերձ Ֆազլեան:

ԴԱՏԱԿԱԶՄ «ՎԱՀՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԸԵՐԵՃԵԱՆ ԹԱՏՐԵԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆՔ»Ի
Առաքումները կատարել հետեւեալ հասցին. Vergine Djerdzian P. O. Box : 510 Beirut - Lebanon

